ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՂԱ/09-2024
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

9 ապրիլի 2024 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Վարչապետի աշխատակազմի ղեկավար (խորհրդի նախագահ)	Ա. Հարությունյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝

Վարչապետի խորհրդական	Ա. Թումանյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Կ. Կարապետյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Դ. Դանիելյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Վ. Տերտերյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ	Վ. Ասցատրյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի գլխավոր մասնագետ	Ն. Գուլյան
«Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Գասպարյան
«Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Միխայլով
Հայաստանի «Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Պողոսյան
«Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Մ. Լազարևա
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Նամաչևաձե
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահ	Ն. Սպանդերաշվիլի
«Մենորա» հրեական մշակույթի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վայներ
«Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության նախագահ	Ռ. Վարժապետյան
«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Ավդալյան
«Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Խ. Հաջոյան
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ	Կ. Հասանով
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վուխրեր
Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ	Լ. Հարությունյան

«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության անդամ Ա. Մինասյան
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Հարությունյան
Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության անդամ Ի. Կոնցևիչ
«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն հասարակական կազմակերպության անդամ Ա. Հարությունյան
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության անդամ Մ. Մինասյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷՐ՝
Երևանի «Պոնտի» հունական հասարակական կազմակերպության նախագահ Է. Միխաիլով

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Նիստը նախագահողի կողմից առաջարկվեց հաստատել խորհրդի նիստի օրակարգը: Օրակարգի վերաբերյալ ներկայացվեց հետևյալ առաջարկությունը՝

1) «Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Իրինա Գասպարյանն առաջարկեց օրակարգում ներառել 1 լրացուցիչ հարց:

Որոշվեց՝ տալ բացասական դիրքորոշում՝ հաշվի առնելով Վարչապետի աշխատակազմի ղեկավար, խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյանի կողմից հնչեցված դիտարկումն առ այն, որ խորհրդի նիստի օրակարգում լրացուցիչ հարց ներառելու դեպքում վերջինիս վերաբերյալ նախապես պետք է տեղեկացվի քարտուղարությանը՝ խորհրդի անդամներին հարցի բովանդակությանը ծանոթացնելու և զեկուցող ընտրելու նպատակով:

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ Ի կատարումն ՀՀ վարչապետի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 1297-Լ որոշման՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) գործող աշխատակարգում փոփոխություններ կատարելու մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

Օրակարգային 2-րդ հարց՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացված 20 մլն դրամ պետական աջակցության բաշխման մասին 05.03.2024 թվականի խորհրդի որոշմամբ համատեղ ծրագրերի համար հատկացված 1,002,000 դրամ գումարով միջոցառում կազմակերպելու մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ հավանություն տալ ազգային փոքրամասնությունների օրվան նվիրված համատեղ միջացառում կազմակերպելու առաջարկին: Միևնույն ժամանակ, միջոցառումն առավել բովանդակային և արդյունավետ կազմակերպելու նպատակով, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանին առաջարկվեց խորհրդի հաջորդ նիստում՝ 2024 թվականի հուլիսի սկզբին, հանդես գալ համապատասխան առաջարկով:

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

Օրակարգային 3-րդ հարց՝ հաղորդում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ազգային փոքրամասնությունների համայնքներին 2024 թվականին հատկացվող ֆինանսական միջոցների և իրականացվող սոցիալ-տնտեսական ծրագրերի մասին

Զեկուցող՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյան

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին

2. Քննարկման ընթացքում հնչեցին նաև հետևյալ էական դիտարկումները՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանն առաջարկեց՝

1.1. «Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Իրինա Գասպարյանին համատեղ քննարկել վերջինիս կողմից առաջ քաշված հարցերը՝ կապված Դիմիտրով գյուղում իրականացվող ծրագրերի, ինչպես նաև գյուղի վարչական ղեկավարի նշանակման հետ.

1.2. «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ Կնյազ Հասանովին համատեղ աշխատանքներ իրականացնել համայնքներում (Հակո, Կանչ և Սորիկ)՝ մարդկանց պարզաբանելու, որ համայնքի խնդիրների լուծումը հենց համայնքի գործառույթն է, իսկ ՀՀ կառավարությունը տարբեր ծրագրերով նպատակ է հետապնդում սկզբնական փուլում աջակցել համայնքներին: Բացատրել բնակչությանը, որ անհրաժեշտ է համաձայնել ջրամատակարարման ծառայության կազմակերպումը հանձնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին՝ դրա դիմաց վճարելով և ընկերությունից ակնկալելով որակյալ ծառայությունների մատուցում:

2) Վարչապետի խորհրդական Արտաշես Թումանյանն առաջարկեց խոշորացման քաղաքականության հարցում պահպանել ներկայիս վիճակը և ազգային փոքրամասնությունների՝ դեռևս խոշորացման չենթարկված համայնքները 1-2 տարի չխոշորացնել: Արդյունքում ուսումնասիրել խոշորացված և խոշորացման չենթարկված համայնքներում այդ ընթացքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ոլորտի փոփոխությունները և դրանց հիման վրա քննարկել հետագա անելիքները:

3. Քննարկման ընթացքում Վարչապետի աշխատակազմի ղեկավար, խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյանի կողմից տրվեցին նաև հետևյալ հանձնարարականները՝

1) Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյանին՝

1.1. ձևակերպել և հաջորդ նիստի օրակարգում ներառել «Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Իրինա Գասպարյանի կողմից առաջ քաշված հարցն այն մասին, որ պետական կառավարման համակարգում ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերին լուծում տալուց և օրենսդրական նախաձեռնություններին ընթացք տալուց առաջ նպատակահարմար է դրանք խորհրդի քննարկման առարկա դարձնելը և խորհրդի կարծիքը հաշվի առնելը.

1.2. մինչև ընթացիկ շաբաթվա վերջն ապահովել ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին բաշխելու նպատակով հատկացված պետական աջակցության տրամադրումը.

1.3. խորհրդի հաջորդ նիստը կազմակերպել 3 ամիս անց՝ հուլիսի սկզբին, ինչպես նաև, համաձայն խորհրդի աշխատակարգի, վերջինիս օրակարգի, անցկացման օրվա և ժամի մասին նախապես տեղեկացնել խորհրդի անդամներին.

1.4. աջակցել «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ Խդր Հաջոյանին և «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության նախագահ Ռիմա Վարժապետյանին բարեգործական հիմունքներով ներմուծվող ապրանքների մաքսատուրքից ազատման հարցում:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ